ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 58-րդ կետով և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1-րդ և 2.2-րդ կետերով, Ինստիտուտի հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ Ինստիտուտի ռեկտորի թափուր պաշտոնի համար:

Ինստիտուտի ռեկտորի պաշտոն կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս այն քաղաքացին, ով ունի գիտական աստիճան:

Ռեկտորի պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

1. Ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվողի գրավոր համաձայնությունը
2. Լուսանկար 3*4 չափի
3. Ինքնակենսագրություն (CV)
4. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, գիտական աստիճանը հավաստող վկայականների պատճեն
5. Տեղեկանք մշտական բնակության վայրից
6. Անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն
7. Հրապարակված գիտական աշխատանքների ցուցակ

8. Հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո,
9. Այլ փաստաթղթեր, որը հավակնորդը համարում է նշանակալի՝ ընտրության համար

Ռեկտորի պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է համարակալված և յուրաքանչյուր էջի հետնամասում դիմումատուի կողմից ստորագրված վիճակում Խորհրդի քարտուղարին փոստային առաքման միջոցով կամ առձեռն եղանակով:

Փաստաթղթերը կարող են ուղարկվել նաև էլեկտրոնային տարբերակով info@sportedu.am հասցեով:

Փաստաթղթերը կարող են ներկայացվել սույն թվականի նոյեմբերի 1-ից 30-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-17:00 (Ինստիտուտի մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին, հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 11)

Մրցույթը տեղի կունենա Ինստիտուտի վարչական շենքում, 2024 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 16:00-ին, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ, Գիտական խորհրդի նիստերի դահլիճում: